

2.1. Դաբադ

Հիվանդության բնորոշումը. Դաբադը ընտանի և վայրի երկկճղակավոր կենդանիների խիստ կոնտագիոզ (շփման միջոցով փոխանցվող, օդակաթիլային) սուր ընթացքով վիրուսային հիվանդություն է: Դաբադը բնորոշ է տենդով և բերանի խոռոչի լորձաթաղանթի, մաշկի և վերջավորությունների խոցային (աֆտա) ախտահարումներով: Մատուցվող մոտ ախտահարվում են կմախքային մկանները և սրտամկանը: Կարող է հիվանդանալ նաև մարդը:

Հարուցիչը ՌՆԹ պարունակող վիրուս է, ունի 7 շիճուկաբանական տիպեր (O, A, C, SAT -1, SAT-2, SAT-3, Asia-1) և ավելի քան 80 վարյանտներ:

Վիրուսը շատ կայուն է.

- արոտավայրերում պահպանվում է մինչև 70 օր, զոմադբում՝ 168 օր,
- կաթը եռացնելիս ոչնչանում է մի քանի վայրկյանում,
- սպանդի ենթարկված կենդանիների մետղիքում (тyша) 6 ժամ անց կաթնաթթվի ազդեցության տակ վիրուսը ոչնչանում է:

Հիշեք.

- Հիվանդության նկատմամբ առավել զգայունակ է ԽԵԿ-ի մատուցողը:
- Ընկալունակ են նաև մարդիկ, **հատկապես երեխաները:**

Հիվանդության տարածման ուղիները՝

- Հիվանդ կենդանիները վիրուսն արտազատում են կաթի, թքի, մեզի, կղկղանքի միջոցով և այլն:
- Վարակումը առավելապես կատարվում է բերանի խոռոչի լորձաթաղանթով, երբ կենդանին ընդունում է կեր և ջուր:
- Վարակումը կատարվում է նաև շփման և աերոգեն (օդակաթիլային) ճանապարհով, վնասված վերջույթներով, սեռական ուղիով:
- Վարակը ունի նաև տրանսմիսիվ բնույթ (տարածում են միջատները, տզերը և այլն):

Կլինիկական նշանները

Դաբադի գաղտնի շրջանը տևում է 36 ժամից մինչև 7 օր, երբեմն 14-21 օր:

Առաջին կլինիկական նշաններն են.

- ջերմության բարձրացում մինչև 41°C և բարձր,
- պուլսի արագացում,
- բերանի խոռոչի և շաղկապենու (աչքի կոպի ներքին մասի) կարմրություն,
- որոճի խանգարում,
- կաթնատվության նվազում,

քթահայելու չորություն,

- կճղակների, պսակի այտուցվածություն, որոնք հետագայում վեր են անցնում խոցակալած վերքերի:

Հետագայում սկսվում է առատ թթահոսություն, ատամների կրճտացում, հիվանդ անասունը շատ զգուշությամբ է ծամում կերը, քանի որ բերանի խոռոչի լորձաթաղանթը պատված է աֆտաներով, և կա ցավազգացություն: Հնարատը է նկատվի կաղություն: Կրծի և պտուկների մաշկի ախտահարման դեպքում ախտահարվում է նաև կրծի պարենխիման (կրծի ներքին կառուցվածքը), որի

հետևանքով փոփոխվում է կաթի կազմը՝ դառնալով դառնահամ, լորձնային և թթու ռեակցիայով (բարձր թթվայնությամբ):

Դաբաղի հասցրած տնտեսական վնասները

- կաթնատվության նվազումը կարող է հասնել մինչև 75% (հետագայում կաթնատվությունը կամ մասամբ է վերականգնվում կամ չի վերականգնվում), 1 կենդանուց 113 լիտր կաթ քիչ է ստացվում,
- պայմաններ են ստեղծվում մաստիտների առաջացման համար,
- հիվանդ հղի կենդանիների մոտ կարող են նկատվել վիժումներ,
- մեծանում է ստերջության տոկոսը,
- չարորակ ձևի դեպքում անկումները (հիմնականում մատղաշի) հասնում են մինչև 70-100%,
- բարորակ ձևի դեպքում ԽԵԿ-ի մահացությունը կազմում է 0,2-0,5%:

Կենդանիները առողջանում են 3-4 շաբաթ հետո, սակայն կենդանու օրգանիզմում դաբաղի վիրուսը պահպանվում է մինչև 1 տարի: Դա նշանակում է, որ անասունը դեռ մեկ տարի վիրուսակիր է: Դաբաղով հիվանդացած և առողջացած կամ վակցինացված կենդանին ձեռք է բերում իմունիտետ միայն դաբաղի տվյալ տիպի նկատմամբ: Քանի որ գոյություն ունեն դաբաղի տարբեր տիպեր, ապա կա հավանականություն, որ նույն կենդանին կհիվանդանա դաբաղի մեկ այլ տիպով:

Կանխարգելում և պայքարի միջոցառումներ. Դաբաղի կանխարգելման միջոցառումներից է ողջ գլխաքանակի վակցինացումը: ՀՀ-ում դաբաղի վակցինացումները կատարվում են պետպատվերի շրջանակներում:

Դաբաղի դեպքում հակահամաճարակային միջոցառումների պլանն իր մեջ ներառում է.

1. անապահով կետերի կարանտինացում,
2. հիվանդների մեկուսացում և բուժում,
3. մնացած կենդանիների ակտիվ (վակցինացում) կամ պասիվ իմունացում (շիճուկի ներարկում),
4. ամենօրյա ախտահանություններ (տես աղյուսակ 4),
5. որպես իմունացման եղանակ օգտագործվում է նաև հիվանդ կենդանիներից առողջների հաջորդական վարակումը:

Արգելվում է միսը և սպանդի մյուս մթերքները բաց թողնել ֆերմայից (հում վիճակում):

Հիվանդ կենդանիների միսը և դրանցից ստացված մսամթերքը կարելի է օգտագործել միայն ջերմային մշակումից հետո, կաթը՝ եռացնելուց հետո (տես աղյուսակ 3):

Բուժում. Դաբաղի բուժման համար օգտագործվում է հակադաբաղային գերիմուն շիճուկ: Անասնապահը ինքնուրույն (անասնաբույժի հետ խորհրդակցելուց հետո) կարող է կատարել սիմպտոմատիկ բուժում :

Սիմպտոմատիկ բուժումը կատարել հետևյալ կերպ.

- ⇒ **Բերանի խոռոչի մշակում (վլացում)** հետևյալ լուծույթներով՝
- կալիումի պերմանգանատ (մարգանցովկա) 1:1000 (1գրամը բացվում է 1լ ջրում)

- ջրածնի պերօքսիդի (պերեկիս) 3%- անոց լուծույթ,
- ֆուրացիլին 1:500 (1մլ ֆուրացիլինը բացվում է 0,5լ ջրում),
- էթակրիտին լակտատ (ռիվանոլ) 1:2000-ի նոսրացրած (1 մլ-ը բացվում է 2 լ ջրում)
- օծում դաբադող նյութերով (տանին, սպիտակ շիբ, շաքարի փոշի), անտիբիոտիկների փոշիներով: Որպեսզի փոշի դեղամիջոցները երկար մնան բերանում և երկար ազդեն, որպես կապակցող նյութ օգտագործում են մեղր:

⇒ **Վերջույթների վերքերի մշակում:** Եթե ախտահարված են վերջույթները, օգտագործել ախտահանիչ վաննաներ.

- 3%-ոց ֆորմալինի լուծույթ (1լ ջրին ավելացնել 30մլ ֆորմալին)

Օրվա ընթացքում մի քանի անգամ ախտահարված վերջույթը դնել նշված որևէ լուծույթով լցված դույլի մեջ և պահել մի քանի րոպե:

Կարող եք նաև վերքը փաթաթել նշված լուծույթների մեջ թաթախած բինտով կամ մաքուր կտորով, որի վրայից փաթաթեք բրեզենտե կտոր: Վիրակապը թողեք ոչ ավել քան 1-2 ժամ: Օրվա մեջ կրկնեք 2-3 անգամ:

⇒ **Մարմնի այլ մասերի վերքերի մշակում:** Էռոզիաներ և խոցեր հայտնաբերելու դեպքում վերքերը մշակել ամեն օր, մինչև որ վերջնականապես բուժվեն: Վերքերի մշակման համար խորհուրդ է տրվում օգտագործել հետևյալ լուծույթները.

- 2-5% յոդի թուրմով և հավասար քանակով կալիումի պերմանգանատի (մարգանցովկա) 1:1000 լուծույթ

Օրինակ՝ 1 լ լուծույթ ստանալու համար 500 մլ 2-5% յոդի թուրմին ավելացնել 500 մլ մարգանցովկայի լուծույթ (500 մլ ջուրը բացած 0.5 գրամ մարգանցովկայով): Մա ամենաարդյունավետ միջոցն է:

- ստրեպտոցիդի փոշի (փոշին ցանել վերքին)
- պղնձարջասպի (կապույտ շիբ) լուծույթ (0.5-1%-ոց լուծույթով վերքի մշակում):